ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 11 մայիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Մ. Թոփուզյանի

Քննության առնելով քաղաքացի Լուսինե Իսրաելյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Լուսինե Իսրաելյանը 2012թ. ապրիլի 23-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 8-րդ եւ 31-րդ հոդվածներին հակասող:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. Դիմողը չի ներկայացրել իր կողմից վիճարկվող դրույթների հակասահմանադրականությունը հիմնավորող անհրաժեշտ եւ բավարար փաստարկներ: Բացի դրանից, դիմողը նաեւ չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաեւ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմա-

նադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող՝ 198-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 24.02.2012թ. ՍԴՈ-1009 որոշումը, որով նշյալ իրավադրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում: Այսինքն՝ այս մասով առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Լուսինե Իսրաելյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

11 մայիսի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-9